ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» մայիսի 2000թ. N 86

Ստեփանակերտ

Ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մթերքների վերամշակման ավարտուն տեխնոլոգիական ցիկլ անցնող ապրանքների ցանկը հաստատելու մասին

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի հոդված 15-ի 24-րդ կետի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հաստատել ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մթերքների վերամշակման ավարտուն տեխնոլոգիական ցիկլ անցնող ապրանքների ցանկը (կցվում է):

1.1. Սույն որոշմամբ հաստատված ցանկի 4-րդ կետը գործում է մինչև 2016 թվականի հունվարի 1-ը: [*5)]

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2000 թվականի հունվարի 1-ից:

ԼՂՀ վարչապետ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հաստատված է[*4)]
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2000թ. մայիսի 16-ի
թիվ 86 որոշմամբ

Ց Ա Ն Կ

Ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մթերքների վերամշակման ավարտուն տեխնոլոգիական ցիկլ անցնող ապրանքների

1. (ուժը կորցրած է ճանաչվել)[*6)]
2. Հաց, լավաշ:
3. (ուժը կորցրած է ճանաչվել)[*6)]
4. հանվել է 2016 թվականի հունվարի 1-ին: [*5)]

**1) ԼՂՀ կառավարության 06.03.01թ. «ԼՂՀ կառավարության 2000թ. մայիսի 16-ի թիվ 86 որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 39 որոշման խմբագրությամբ*

**2) ԼՂՀ կառավարության 20.08.02թ. «ԼՂՀ կառավարության 2000թ. մայիսի 16-ի թիվ 86 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 199 որոշման խմբագրությամբ*

**3) ԼՂՀ կառավարության 11.03.13թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 16-ի N 86 որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 103-Ն որոշման խմբագրությամբ*

**4) ԼՂՀ կառավարության 12.02.15թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 16-ի N 86 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 48-Ն որոշման խմբագրությամբ*

**5) ԼՂՀ կառավարության 17.04.15թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 16-ի N 86 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 227-Ն որոշման խմբագրությամբ (Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:)*

**6) ԱՀ կառավարության 16.02.22թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 16-ի N 86 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 129-Ն որոշման խմբագրությամբ (Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:)*